ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/51028-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-315-10.10.2019-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Պ. Քացախյան
Հեռ. 010515686

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-315-10.10.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է կատարել լրացում «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասում և կոչման հավելավճար նախատեսել նաև դատական կարգադրիչների համար:

Միաժամանակ նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ դատական կարգադրիչների համար կոչման հավելավճար չնախատեսելու հանգամանքը «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության հիմնական սկզբունքների խախտում է, բացի դրանից դատական կարգադրիչների ծառայությունում կոչումը չի կատարում բարոյահոգեբանական և նյութական խթանի դեր:

Այդ կապակցությամբ հայտնում ենք՝

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված սկզբունքները չեն բովանդակում կոչման կամ դասային աստիճանի համար հավելավճարներ վճարելու վերաբերյալ դրույթներ: Ավելին, չնայած կոչումների շնորհումն առաջին հերթին հատուկ է զինվորական ծառայությանը, նշված օրենքով զինծառայողներին և նրանց հավասարեցված քրեակատարողական և փրկարար ծառայության ծառայողներին կոչումների համար հավելավճար չի նախատեսվել:

Բացի դրանից, հարկ է նկատել, որ «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի հա-

մածայն դատական կարգադրիչին (բացառությամբ դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոնների) դատական կարգադրիչների ծառայության համապատասխան կոչումը շնորհվում է պաշտոնի նշանակման հետ միաժամանակ (եթե նա չունի դատական կարգադրիչի կամ պետական ծառայության ավելի բարձր կոչում): Այսինքն, այն ոչ թե աշխատանքում ցուցաբերած առանձնահատուկ ծառայությունների, մարդկային և մասնագի-տական բարձր հատկանիշների համար խրախուսման միջոց է, ինչպես որոշ ծառայություն-ներում, այլ, որպես պաշտոնի զբաղեցման պարտադիր պայման, շնորհվում է բոլոր դատա-կան կարգադրիչներին (բացառությամբ բարձրագույն պաշտոնների):

Հարկ է նշել նաև, որ նմանատիպ կարգավորում առկա էր նաև քաղաքացիական ծառայության համակարգում, որը վերանայվեց 2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած «Քաղաքացիական ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-205-Ն օրենքով. նշված օրենքն ուժի մեջ մտնելու պահից դասային աստիճաններ չեն շնորհվում քաղաքացիական ծառայողներին (բացառությամբ ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ և 3-րդ ենթա-խմբերի), և դրան համապատասխան հավելավճարներ չեն նախատեսվում: Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին դասային աստիճանը շնորհվում է որպես խրախուսանքի միջոց:

Այսինքն, հանրային ծառայության կառավարման ներկայումս վարվող քաղաքականությամբ լրացուցիչ աշխատավարձի այս տեսակը վերանայվում է: Հետևաբար, պետական ծառայության մի տեսակում համապատասխան երաշխիքը հանելու դեպքում մեկ այլ ծառայությունում նույն իրավիճակում նախատեսելն անհավասար պայմաններ կստեղծի երկու ծառայություններում ծառայողների համար:

Հիմնական աշխատավարձի հաշվարկման ժամանակ ծառայության ստաժի հաշվարկման խնդրի վերաբերյալ տեղեկացնում ենք, որ, ինչպես պետական այլ ծառայություններում (բացառությամբ զինվորական ծառայության, քրեկատարողական և փրկարար ծառայության), դատական կարգադրիչների ծառայությունում ևս հիմնական աշխատավարձը հաշվարկվում է համապատասխան պաշտոնում ունեցած ստաժի հիման վրա:

Հարկ ենք համարում նշել նաև, որ նախագծի ընդունումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի ավելացման՝ տարեկան շուրջ

98.0 մլն դրամի չափով:

Ամփոփելով շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծով քննարկվող օրենքի գործող հոդվածը թողնել անփոփոխ:

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ ներկայումս հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության նախագծի շրջանակում քննարկվում են հանրային ծառայողների շահադրդման այլ պայմաններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2019 թվականի N 1777 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության - սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արման Ուդումյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-315-10.10.2019-ԱՍ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 28
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-315-10.10.2019-ԱՍ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին նախադասության մեջ «հարկադիր կատարողներին» բառերից հետո ավելացնել «դատական կարգադրիչներին» բառերը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

« ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ » ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

13-ը հունիսի 2018 թվականին ընդունված «Դատական դեպարտամենտում ծառայության մասին» ՀՀ օրենքով կանոնակարգվել է Դատական կարգադրիչների ծառայության գործունեությունը եւ իրավահարաբերությունները:

Սույն օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ այն է Պետական այլ մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների, դասային աստիճանների որակավորման դասերի համապատասխանությունը դատական կարգադրիչների ծառայության կոչումներին սահմանում է Կառավարությունը: ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի «Հանրային ծառայության առանձին տեսակներով սահմանված պաշտոնների, դասային կոչումների եւ աստիճանների համապատասխանությունը սահմանելու եւ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 1796-Ն եւ թիվ 1797-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 911-Ն որոշմամբ սահմանվել է Դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների եւ կոչումների համապատասխանությունը: «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն կոչման համար հավելավճար տրվում է հարկադիր կատարողներին, հարկային, մաքսային ծառայողներին, իսկ ՀՀ պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության համակարգերում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների (այսուհետ նաեւ՝ զինծառայող), քրեակատարողական եւ փրկարար ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափը նույն օրենքի 16-րդ հոդվածի համաձայն որոշվում է բազային աշխատավարձի եւ նրանց պաշտոնի խմբի (ենթախմբի) սանդղակում՝ համապատասխանաբար զինվորական, փրկարար կամ քրեակատարողական ծառայության ստաժին համապատասխանող գործակցի արտադրյալով:

Հարկ է նշել, որ դատական կարգադրիչներին կոչման համար հավելավճարներ նախատեսված չեն, որով խախտվում են «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պետական պաշտոն եւ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության հիմնական սկզբունքները, որն իր հերթին ի չիք է դարձնում Դատական կարգադրիչների ծառայությունում կոչումը՝ որպես բարոյահոգեբանական եւ նյութական խթան ծառայելու կարեւորագույն հանգամանքը:

Ուստի «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված պետական պաշտոն եւ պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության հիմնական սկզբունքներն ապահովելու, ինչպես նաեւ Դատական կարգադրիչների ծառայությունում կոչումը՝ որպես բարոյահոգեբանական խթան կիրառելու նպատակով, կարեւորում ենք «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության

մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու համար, օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալը դատական կարգադրիչների կոչման համար հավելավճարներ եւ դրանց վճարման կարգն ու չափերը սահմանող նախագծով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Օրենքի 7-րդ հոդվածի մասի առաջին նախադասության մեջ «հարկադիր կատարողներին» բառերից հետո ավելացնել «դատական կարգադրիչներին» բառերը:

Օրենքում համապատասխան փոփոխությունները կատարելուց հետո կապահովվեն պետական ծառայողների վարձատրության սկզբունքների հիմնական պահանջները: Դատական կարգադրիչների ծառայության «Աշխատողների աշխատավարձեր եւ հավելավճարներ» ֆոնդը կավելանա ամսական 5,584.24 հազ. դրամով, իսկ տարեկան կտրվածքով՝ 73,321.11 հազ. դրամով: